



ՆԱԻՐԻ
ինչորանս

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ
Խորհրդի 29.03.2024 թվականի թիվ 18 որոշմամբ
(Ուժի մեջ է՝ 15.04.2024թ.-ից)

«ԱՌՈՂՋ ԱՆՀԱՏ» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Փաստաթղթի կոդ՝ Պ750-02-07
Խմբագրություն՝ 03
(Ակտիվի դաս՝ Հրապարակային)

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «Առողջ անհատ» ապահովագրության պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) և այլ իրավական ակտերի (միասին այսուհետ՝ ՀՀ օրենսդրություն):
- 1.2. «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված թիվ 0006 (0009) լիցենզիայի հիման վրա իրականացնում է «Առողջության ապահովագրություն» և «Դժբախտ պատահարներից ապահովագրություն (ներառյալ՝ արդյունաբերական վնաս և մասնագիտական գործունեության ընթացքում ձեռք բերված հիվանդություններ)» դասերի ապահովագրություն՝ սույն Պայմանների հիման վրա կնքելով «Առողջ անհատ» ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր:

ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 2.1. **Ապահովագրող**՝ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՆՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՊԸ /այսուհետ՝ Ընկերություն/:
- 2.2. **Ապահովադիր**՝ Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր կնքած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր:
- 2.3. **Ապահովագրված անձ**՝ Պայմանագրում նշված ֆիզիկական անձ, որի հետ տեղի ունեցած պատահարը կարող է դիտարկվել որպես պայմանագրի առարկա, և որի տարիքը Պայմանագրի կնքման պահին կազմում է 16-ից 85 տարեկան (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով): Պայմանագրի կնքման պահին հոգեկան խանգարվածության հիվանդություններ, էպիլեպսիա, նյարդային համակարգի այլ ծանր խանգարումներ, օնկոլոգիական հիվանդություններ բնածին անկանոնություններ և ֆունկցիոնալության սահմանափակում, ֆունկցիոնալության սահմանափակման խորը կամ ծանր աստիճան, ինչպես նաև ՄԻԱՎ կամ ՁԻԱՀ ախտորոշում ունեցող անձը կարող է հանդիսանալ Ապահովագրված անձ միայն այն պայմանով, որ մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը Ապահովադիրը գրավոր տեղեկացրել է այդ մասին Ապահովագրողին: Հակառակ դեպքում այդ անձի հետ կնքված պայմանագիրը համարվում է առոչինչ դժբախտ պատահարների ապահովագրության մասով:
- 2.4. **Շահառու**՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում ապահովագրական պայմանագրով կամ վկայագրով նախատեսված ապահովագրական հատուցումն ստանալու իրավունք ունեցող անձ:
- 2.5. **Պայմանագիր**՝ ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր:
- 2.6. **Պայմանագրի կողմեր**՝ Ապահովադիր, Ապահովագրված անձ և Ապահովագրող:
- 2.7. **Ապահովագրության ծրագիր**՝ Ապահովագրողի կողմից սահմանված առողջության ապահովագրության ծրագիր:
- 2.8. **Ապահովագրական գումար**՝ Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափ:
- 2.9. **Ապահովագրավճար**՝ Պայմանագրով սահմանված չափով Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար:
- 2.10. **Ապահովագրական պատահար**՝ Պայմանագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում:
- 2.11. **Ապահովագրական ռիսկ**՝ առաջանալու որոշակի հավանականությամբ և պատահականությամբ Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով առաջացող վնասի հնարավոր մեծություն:
- 2.12. **Դժբախտ պատահար**՝ Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրված անձի կամքից անկախ տեղի ունեցած հանկարծակի, պատահական, անսպասելի, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ տևողությամբ), ոչ կենսաբանական, արտաքին ազդեցություն ունեցող իրադարձություն (դեպք), որի հետևանքով առաջանում է Ապահովագրված անձի աշխատունակության ժամանակավոր և (կամ) մշտական կորուստ և (կամ) մահ:
- 2.13. **Աշխատունակության մշտական կորուստ**՝ Ապահովագրված անձի այնպիսի առողջական վիճակ, երբ նա կարիք ունի մշտական խնամքի (օգնության կամ հսկողության) կամ կարող է իրականացնել աշխատանքային գործունեության միայն առանձին տեսակներ՝ հատուկ կազմակերպված անհատական պայմաններում և անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Գնահատող

հանձնաժողով) որոշմամբ ստանում ֆունկցիոնալության սահմանափակման միջին, ծանր կամ խորը աստիճան:

- 2.14. **Աշխատունակության ժամանակավոր կորուստ կամ ֆունկցիոնալության սահմանափակման թեթև աստիճան**՝ Ապահովագրված անձի այնպիսի առողջական վիճակ, երբ նա ժամանակավորապես կորցնում է որևէ աշխատանքի նկատմամբ ունակությունները, որոնք վերականգնելի բնույթ ունեն և միաժամանակ ստանում է ամբուլատոր կամ ստացիոնար բուժում համապատասխան բժշկական հաստատությունում և չի ստանում ֆունկցիոնալության սահմանափակման որևէ աստիճան:
- 2.15. **Բժշկական հաստատություն**՝ ՀՀ տարածքում բժշկական ծառայություններ տրամադրելու համապատասխան լիցենզիա ունեցող և սույն Պայմանների շրջանակներում Ընկերության հետ համագործակցող ֆիզիկական կամ իրավաբանական անձ:
- 2.16. **Ապահովագրական պահանջ**՝ Ապահովագրված անձի, վերջինիս ներկայացուցչի, Ապահովադրի կամ Բժշկական հաստատության կողմից Պայմանագրի շրջանակներում ներկայացված պահանջ:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

- 3.1. Ապահովագրության օբյեկտն Ապահովադրի(Ապահովագրված անձի) գույքային և անձնական շահերն են՝ կապված Ապահովագրական պատահարների (ռիսկերի) ի հայտ գալու հետ:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ

- 4.1 Սույն Պայմանների համաձայն՝ Ապահովագրողն ապահովագրական հատուցում իրականացնում է՝
 - 4.1.1 Ապահովագրված անձի կողմից կցված բժշկական հաստատությունում կանխարգելիչ բուժզննում անցնելու դեպքում,
 - 4.1.2 Սահմանված ամբուլատոր ծառայությունից Ապահովագրված անձի՝ կցված բժշկական հաստատությունում օգտվելու դեպքում,
 - 4.1.3 Դժբախտ պատահարի հետևանքով Ապահովագրված անձի աշխատունակության ժամանակավոր կորստի, աշխատունակության մշտական կորստի կամ մահվան դեպքում:

ԲԱԺԻՆ 5. ՇԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 5.1. Սույն Պայմանագրով ապահովագրական պատահար չեն համարվում և ըստ այդմ Ապահովագրողի կողմից չեն հատուցվում ստորև նշված հիվանդությունները, ախտաբանական երևույթները և դրանց հետ կապված բոլոր բժշկական ծախսերը՝
 - 5.1.1. Ապահովագրված անձի կողմից արկոհոլի, թմրադեղերի, հոգեմետ և այլ տոքսիկ նյութերի օգտագործման (անկախ օգտագործման քանակից), եթե վերջինս ուղղակի կապված է պատահարի առաջացման հետ,
 - 5.1.2. Դժբախտ պատահարի հետևանքով առողջական խնդիրները չբուժելու, բժշկի խորհրդին չհետևելու կամ ոչ ամբողջությամբ հետևելու, ինչպես նաև առաջացած առողջական խնդիրների բուժումից հրաժարվելու կամ բուժումն ուշացնելու պատճառով առաջացած առողջական խնդիրների բարդացման, ինչպես նաև դրա հետևանքով նոր վնասվածքների առաջացման,
 - 5.1.3. Տարբեր տեսակի փորձարկումների ժամանակ առաջացած առողջական խնդիրների, մարմնական վնասվածքների կամ մահվան,
 - 5.1.4. Ապահովագրված անձի առողջության վատթարացման, գիտակցության կամ մտավոր խանգարումների հետևանքով առաջացած Դժբախտ պատահարի,
 - 5.1.5. Ապահովադրի, Ապահովագրված անձի կամ Շահառուի կողմից կանխամտածված և (կամ) հակաիրավական (հանցավոր) գործողությունների կատարման կամ մասնակցության, որոնք ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ են Ապահովագրական պատահարի հետ,
 - 5.1.6. Բնքնասպանության (Ապահովագրված անձի կողմից ինքնասպանության փորձի) կամ կանխամտածված անդամախեղության կամ Ապահովագրված անձի անմեղսագիտակ վիճակի, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրված անձը հասցվել է այդպիսի իրավիճակի այլ անձի կողմից,
 - 5.1.7. Ապահովագրված անձի կողմից իրեն վտանգի ենթարկելու (բացառությամբ ուրիշի կյանքը փրկելու),

- 5.1.8. Ապահովագրված անձի կողմից մրցումներին՝ որպես պրոֆեսիոնալ մարզիկ մասնակցության (եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ),
 - 5.1.9. Ապահովագրված անձի՝ որպես զինծառայող իր պարտականությունների կատարման,
 - 5.1.10. Ապահովագրված անձի կողմից զվարճահարմարանքներին մասնակցության, եթե զվարճահարմարանքի տվյալ տեսակը հակացուցված է Ապահովագրվածին բժշկական հետազոտության արդյունքներով, որն ի հայտ է բերել համապատասխան հիվանդությունը կամ վիճակը,
 - 5.1.11. Ապահովագրված անձի կողմից էքստրեմալ սպորտի (ալպինիզմ, վինդսերֆինգ, դայվինգ, պարաշյուտիզմ, սավառնարվեստ, սքեյթբորդինգ, սնոուբորդինգ, մաունթինբայկ, հոլովակասպորտ, ժայռամագլումը, սպելեոլոգիա, էքստրեմալ տուրիզմ, ձմեռային լող, բեյսբոլ, ֆուտբոլ և այլն) տեսակներով զբաղվելու (եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ),
 - 5.1.12. Հղիություն և ծննդոգնություն, դրանց հետ կապված ցանկացած բժշկական և/կամ հարբժշկական ծախս,
 - 5.1.13. Բնույլի, էպիլեպտիկ նոպաների կամ ամբողջ մարմնի այլ ջղաձգությունների և այլ անհայտ էթիոլոգիայի ցնցումային համախտանիշի հետևանքով առաջացած պատահարների: Ապահովագրական հատուցում այնուամենայնիվ իրականացվում է, եթե այդպիսի վատթարացումը կամ նոպաներն առաջացել են Պայմանագրով նախատեսված Ապահովագրական պատահարի հետևանքով,
 - 5.1.14. Քաղաքացիական հուզումների, պատերազմների, զորաշարժերի կամ ռազմական այլ գործողությունների, ահաբեկչական գործողությունների, գանգվածային ակցիաների, գործադուլների անմիջական մասնակցության,
 - 5.1.15. Միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակի ազդեցության,
 - 5.1.16. Հոգեկան հիվանդությունների և շեղումների վերաբերյալ խորհրդատվության, հետազոտման և բուժման ծախսերը: Հոգեթերապևտի, հոգեբանի ծառայությունները,
 - 5.1.17. Վարակային այնպիսի հիվանդությունների վերաբերյալ խորհրդատվության, հետազոտման /ներառյալ արյան անալիզները/ և բուժման ծախսերը, որոնք փոխանցվում են առավելապես սեռական ճանապարհով՝ գոնորեա, սիֆիլիս, իլամիդիոզ, միկոպլազմոզ, տրիխոմոնիազ, ցիտոմեգալովիրուս, ուրեոպլազմոզ, անալ և զենիտալ հերպես և այլն,
 - 5.1.18. ՄԻԱՎ վարակ, ՉԻԱՀ և այլ հաստատված իմունաանբավարարության վիճակներ: Բոլոր տեսակի վիրուսային հեպատիտները,
 - 5.1.19. Անգիոգրաֆիկ հետազոտությունները: Ոչ ավանդական բժշկության մեթոդներ, ֆիզիոթերապիա, կինեզիոթերապիա, բուժական մերսում, լազերային թերապիա, օզոնաթերապիա, պլազմոֆերեզ, հենոտրեֆիա, հիպերբարիկ օքսիգենացում, ալֆա-կապսուլա,
 - 5.1.20. Կոսմետիկ և հոգեբանական վիճակը բարելավելու նպատակով կատարված հետազոտման, բուժման, միջամտությունների ծախսերը (այդ թվում՝ պապիլոմաների, պոլիպների, աթերոմաների, լիպոմաների, գորտնուկների, խալերի և այլ էլեմենտների հեռացում),
 - 5.1.21. Վերարտադրողական ֆունկցիայի խանգարում, և դրա հետ կապված խորհրդատվություն, հետազոտում և բուժում (օրինակ՝ սեռական հորմոնալ դիսֆունկցիա, դիսամենորեա, դրանց ախտորոշում և բուժում), հակաբեղմնավորիչ միջոցներ: Հղիության արհեստական ընդհատում, հղիության հսկողություն: Էքստրակորպորալ բուժման մեթոդներ,
 - 5.1.22. Ալկոհոլամոլություն, թմրամոլություն և թունամոլություն: Հիվանդություններ, որոնք առաջացել են Ապահովագրված անձի կողմից ալկոհոլի և (կամ) թմրադեղերի, և (կամ) թունաքիմիկատների օգտագործման:
 - 5.1.23. Օպտիկական ապակու (լինզաների) և շրջանակների տրամադրում
 - 5.1.24. Ստացիոնար բուժօգնություն, ստացիոնար և ամբուլատոր վիրահատություններ, մանիպուլացիաներ, ՄՌՏ հետազոտություն: ՀՏ հետազոտություն: Գենետիկական հետազոտություններ:
- 5.2. Ապահովագրողն ապահովագրական հատուցում չի իրականացնում նաև՝

- 5.2.1. Եթե Ապահովագրված անձի մոտ տեղի է ունեցել առողջության վատթարացում, որը հետևանք է բուժման կամ վիրահատական միջամտությունների,
- 5.2.2. Եթե Պատահարը տեղի է ունեցել Ապահովագրված անձի կողմից կերակրափողի միջոցով կոշտ նյութեր (սնունդ) ընդունելու հետևանքով, բացառությամբ հանկարծակի սուր թունավորումների,
- 5.2.3. Եթե Ապահովագրված անձն առանց համապատասխան լիցենզիա/որակավորում ունենալու զբաղվել է լիցենզիա (որակավորում) պահանջող գործունեությամբ, որի ուղղակի հետևանքով առաջ է եկել Դժբախտ պատահարը,
- 5.2.4. Եթե Դժբախտ պատահարը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ Ապահովագրված անձը ճանապարհորդում կամ անցնում է այն երկրներով, որոնց տարածքում իրականացվում են պատերազմական (նաև քաղաքացիական) կամ այլ ռազմական գործողություններ, բացառությամբ այն դեպքի, երբ Դժբախտ պատահարը տեղի է ունեցել այդ տարածքներ մուտք գործելուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում,
- 5.2.5. Եթե Ապահովագրված անձը ցանկացած օդային տրանսպորտում ներգրավվել է որպես օդաչու,
- 5.2.6. Սանատոր-առողջարանային բուժում և (կամ) վերականգնողական բուժումը, ֆիզիոթերապիան,
- 5.2.7. Ուռուցքաբանական ծառայությունները, ճառագայթային բուժումը, քիմիաթերապիան, ռադիոյոդթերապիան և այլն,
- 5.2.8. Շտապ բժշկական օգնությունը,
- 5.2.9. Բժշկի տնային կանչը,
- 5.2.10. Դեղորայքային բուժումը, բժշկական պարագաները, անշարժացնող սարքավորումները և այլն,
- 5.2.11. Ատամնաբուժությունը,
- 5.2.12. Ցանկացած այլ բժշկական և (կամ) հարբժշկական ծառայություններ, որոնք նախատեսված չեն Ապահովագրական ծրագրով:

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

- 6.1. Ապահովագրական գումարը սահմանվում է Պայմանագրով և/կամ Ապահովագրության ծրագրով՝ Պայմանագրի գործողության ողջ ժամկետի համար:
- 6.2. Ապահովագրական գումարը, Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում վճարելուց հետո, ինքնաշխատ կերպով նվազում է հատուցված գումարի չափով:
- 6.3. Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած Ապահովագրական պատահարների գծով վճարված ապահովագրական հատուցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել Ապահովագրական գումարը:

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ, ԶՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

- 7.1. Ապահովագրավճարը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից Պայմանագրի ողջ ժամկետի համար:
- 7.2. Ապահովագրավճարի վճարման կարգը սահմանվում է Պայմանագրով:
- 7.3. Ապահովագրավճարի չվճարման հետևանքները սահմանվում են Պայմանագրով, Պայմաններով և այլ իրավական ակտերով:

ԲԱԺԻՆ 8. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԺԱՄԿԵՏ

- 8.1. Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի միջև կնքված փաստաթուղթ է, ըստ որի Ապահովագրողն Ապահովագրավճարի դիմաց պարտավորվում է Պայմանագրով և սույն Պայմաններով սահմանված կարգով Ապահովագրված անձին տրամադրել ապահովագրական հատուցում:
- 8.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովադրի կողմից բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա:
- 8.3. Պայմանագիրը կնքված է համարվում հոգուտ Ապահովագրված անձի (Շահառուի), եթե Պայմանագրում այլ անձ նշված չէ որպես Շահառու: Առանց Ապահովագրված անձի գրավոր համաձայնության՝ Ապահովագրված անձ չհանդիսացող Ապահովադիրը կամ երրորդ անձն ամեն դեպքում Շահառու լինել չի կարող:
- 8.4. Պայմանագիրը կնքելու համար Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին տրամադրել առնվազն հետևյալ տվյալները.

- 8.4.1. Ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ (Անձնագիր/ID), հեռախոսահամարը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի և դրա ներդիրների բնօրինակները կամ պատշաճ վավերացված պատճենները, հարկ վճարողի հաշվառման համարը:
- 8.4.2. Ապահովագրված անձի անձը հաստատող փաստաթուղթ (Անձնագիր/ID), հեռախոսահամարը,
- 8.4.3. Ապահովագրողի պահանջով այլ փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի ճշգրիտ գնահատման, ինչպես նաև Պայմանագրի կնքման համար:
- 8.5. Պայմանագիրը համարվում է կնքված Ապահովագրողի և Ապահովագրողի կողմից այն ստորագրվելու օրվանից:
- 8.6. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Ապահովագրողին Ապահովագրավճարի վճարման օրվանից, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ և գործում է 365 (երեք հարյուր վաթսուհինգ) օր:
- 8.7. Ապահովագրական տարածք է համարվում Հայաստանի Հանրապետությունը:
- 8.8. Սույն Պայմանները կցվում են Պայմանագրին՝ հանդիսանալով դրա անբաժանելի մաս և պարտադիր են Պայմանագրի կողմերի համար:
- 8.9. Պայմանագրի և սույն Պայմանների միջև անհամապատասխանությունների դեպքում գերակա է Պայմանագիրը, իսկ սույն Պայմանների և նրա թարգմանությունների տարբերությունների դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 9.1. *Ապահովագրողին իրավունք ունի՝*
 - 9.1.1. Ապահովագրողից պահանջել պետական գրանցումը և գործունեության թույլտվությունը հավաստող փաստաթղթերը (պետական գրանցման վկայական, լիցենզիա),
 - 9.1.2. Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձի միջոցով,
 - 9.1.3. Պայմանագրով նախատեսված դեպքերում ստանալ ապահովագրական հատուցում,
 - 9.1.4. Պայմանագիրը կորցնելու դեպքում՝ գրավոր դիմումի հիման վրա ստանալ դրա կրկնօրինակը,
 - 9.1.5. ՀՀ օրենսդրությամբ և Պայմաններով սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Պայմանագիրը:
- 9.2. *Ապահովագրողը պարտավոր է՝*
 - 9.2.1. Ապահովագրողին հայտնել իր և Ապահովագրված անձի գծով առկա այլ ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի մասին,
 - 9.2.2. Ապահովագրողին ներկայացնել իր և Ապահովագրված անձին վերաբերվող հավաստի տեղեկություններ և փաստաթղթեր,
 - 9.2.3. Պայմանագրով սահմանված ԿԱՐԳՈՎ և ԺԱՄԿԵՏՈՒՄ ՎՃԱՐԵԼ ապահովագրավճարը,
 - 9.2.4. Պատահար տեղի ունենալու դեպքում պայմանագրով ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԿԱՐԳՈՎ պատահարի մասին ՀԱՅՏՆԵԼ ապահովագրողին,
 - 9.2.5. ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼ Ապահովագրված անձին /Շահառուին/:
- 9.3. *Ապահովագրված անձն իրավունք ունի՝*
 - 9.3.1. Ապահովագրողից պահանջել Ընկերության հետ համագործակցող Բժշկական հաստատությունում կազմակերպել բժշկական օգնության և ծառայությունների մատուցման տրամադրման գործընթացը,
 - 9.3.2. Ապահովագրողին տեղեկացնել Բժշկական հաստատության կողմից մատուցված ծառայության որակի մասին:
- 9.4. *Ապահովագրված անձը պարտավոր է՝*
 - 9.4.1. Պայմաններով և Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում Ապահովագրողին տեղեկացնել ախտորոշում կամ բուժում պահանջող իր առողջական վիճակի մասին,
 - 9.4.2. չստեղծել իր առողջության համար վտանգավոր իրավիճակներ:
- 9.5. *Ապահովագրողն իրավունք ունի՝*
 - 9.5.1. Պայմանագիր կնքելուց առաջ պահանջել անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ, ստուգել դրանք,

- 9.5.2. Ապահովադրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձի միջոցով,
- 9.5.3. մերժել Պայմանագրի կնքումը՝ Ապահովագրողին կեղծ, ոչ ամբողջական փաստաթղթեր կամ տեղեկություն տրամադրելու դեպքում,
- 9.5.4. սահմանել Ապահովագրավճարի չափ՝ համաձայն իր կողմից կիրառվող ապահովագրական սակագների,
- 9.5.5. կազմակերպել Ապահովագրված անձի՝ բժշկական ծառայությունների ստացման գործընթացը, վերահսկել տրամադրված բժշկական ծառայությունների որակը և խարդախությունների ռիսկը,
- 9.5.6. հարցում կատարել համապատասխան իրավասու մարմիններին տեղի ունեցած պատահարի փաստը և պատճառները հաստատող փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ ստանալու նպատակով,
- 9.5.7. Ապահովագրական հատուցման կամ մասնակի հատուցման վերաբերյալ որոշման կայացումից հետո կասեցնել կամ երկարաձգել ապահովագրական հատուցման գործընթացը, եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց պատճառով Ապահովագրողն անհրաժեշտ է համարում ստանալ հավելյալ տեղեկություն Ապահովագրական պատահարի վերաբերյալ,
- 9.5.8. մերժել Ապահովագրական հատուցման վճարումը, եթե Ապահովադիրը կամ Ապահովագրված անձը խախտել է Պայմանագրով և սույն Պայմաններով սահմանված իր պարտավորությունները,
- 9.5.9. մերժել Ապահովագրական հատուցման վճարումը, եթե ապահովագրական պատահարի ի հայտ գալու պահին Ապահովագրավճարը (կամ դրա այն մասը, որն այդ պահին պետք է վճարված լիներ) դեռևս վճարված չէ,
- 9.5.10. ծանոթանալ Ապահովագրված անձի բժշկական և այլ փաստաթղթերին, որտեղ արտացոլված են դժբախտ պատահարի պատճառները, Ապահովագրված անձի ֆիզիկական ու հոգեկան վիճակը, ախտորոշումը, բուժման ընթացքը և դրա արդյունքների կանխատեսումը, ինչպես նաև նշված տեղեկատվությունն օգտագործել Պայմանագրի հետագա սպասարկման, Ապահովագրական հատուցման տրամադրման (մերժման) վերաբերյալ որոշման կայացման համար,
- 9.5.11. ստուգել Ապահովագրված անձին մատուցվող բժշկական ծառայությունների համապատասխանությունը, ծառայությունների տրամադրման և Պայմանագրի այլ դրույթների կատարման ժամկետները, ինչպես նաև անցկացնել տրամադրված ծառայությունների որակի փորձաքննություն,
- 9.5.12. մերժել հատուցման վճարումը ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով կամ Պայմաններով սահմանված կարգով,
- 9.5.13. ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով և Պայմանագրով սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Պայմանագիրը:
- 9.6. *Ապահովագրողը պարտավոր է՝*
 - 9.6.1. Ապահովադրին ծանոթացնել Պայմանագրի պայմանների հետ և տրամադրել դրա օրինակը,
 - 9.6.2. Պայմանագրով և Պայմաններով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետում իրականացնել ապահովագրական հատուցում,
 - 9.6.3. պաշտպանել Ապահովագրված անձի շահերը Բժշկական հաստատությունում,
 - 9.6.4. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձի կամ Ապահովադրի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո պարզել դրանց իսկությունը և սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված կարգով կատարել ապահովագրական հատուցում կամ մերժել այն,
 - 9.6.5. կատարել սույն Պայմաններով, Պայմանագրով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ պարտականություններ:
- 9.7. Պայմանագրի կողմերը պարտավոր են չհրապարակել, չբացահայտել և (կամ) երրորդ անձին չտրամադրել իրենց հայտնի դարձած բժշկական, ֆինանսական և ապահովագրական գաղտնիք հանդիսացող և (կամ) պարունակող ցանկացած տեղեկություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, և իրենց հայտնի դարձած տեղեկությունը չօգտագործել սեփական և (կամ) երրորդ անձանց շահերին, ինչպես նաև միմյանց տնտեսական դիրքին վնաս հասցնելու համար:

9.8. Ապահովադիրն (Ապահովագրված անձը, Շահառուն) ու Ապահովագրողն ունեն Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

ԲԱԺԻՆ 10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ

- 10.1 Սույն Ապահովագրության շրջանակներում Ապահովագրողը հատուցում է՝
- 10.1.1 **Տարեկան կանխարգելիչ բժշկական զննության ծախսերը**՝ համաձայն Պայմանների և Ապահովագրական ծրագրով սահմանված ծավալի:
 - 10.1.2 **Ամբուլատոր ծառայություններ**՝ ըստ գործընկեր բժշկական կենտրոնի, Պայմանների և Ապահովագրական ծրագրով սահմանված ծավալի:
- Հատուցումն իրականացվում է միայն կցված բժշկական հաստատության համապատասխան բժիշկ-մասնագետի կողմից գրավոր հիմնավորմամբ ցուցված լինելու դեպքում:
- 10.1.3 **Դժբախտ պատահարի հետևանքով ժամանակավոր անաշխատունակության, մշտական անաշխատունակության կամ մահվան ծախսերը**՝ համաձայն Պայմանների և Ապահովագրական ծրագրով սահմանված ծավալի՝
 - ✓ բժշկի ցուցումով փաստացի կատարված բժշկական ծախսերը, որոնք իրականացվել են Ապահովագրական պատահարին հաջորդող 365 օրվա ընթացքում,
 - ✓ *Ապահովագրված անձի ֆունկցիոնալության սահմանափակման խորը աստիճանի ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 100 %-ի չափով,*
 - ✓ *Ապահովագրված անձի ֆունկցիոնալության սահմանափակման ծանր աստիճանի ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 75 %-ի չափով,*
 - ✓ *Ապահովագրված անձի ֆունկցիոնալության սահմանափակման միջին աստիճանի ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 50 %-ի չափով,*
 - ✓ *Ապահովագրված անձի մահվան դեպքում՝ Ապահովագրական գումարի 100 %-ի չափով:*
- 10.2 Եթե Ապահովագրական պատահարի հետևանքով տեղի ունեցած Ապահովագրված անձի աշխատունակության մշտական կորստին հաջորդել է Ապահովագրված անձի մահը, ապա վերջինիս համար իրականացվող հատուցման չափից նվազեցվում են տվյալ Ապահովագրական պատահարի համար արդեն իսկ իրականացված ապահովագրական հատուցումները:
- 10.3 Պայմանագրով կարող է սահմանվել յուրաքանչյուր ապահովագրական հատուցման իրականացման կամ առանձին տեսակի վնասվածքների համար ապահովագրական հատուցման իրականացման առավելագույն շեմ մեկ ապահովագրական պատահարի համար:
- 10.4 Վճարվող ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել տվյալ պահին գործող Ապահովագրական գումարի չափը:

ԲԱԺԻՆ 11. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹՍՑ

- 11.1 Պայմանների 4.1.1 և 4.1.2 կետերում նշված ծառայությունների շրջանակներում՝
- 11.1.1 Ապահովագրված անձը պարտավոր է դիմել բացառապես Ապահովագրողին,
 - 11.1.2 հատուցման ենթակա են Ընկերության հետ համագործակցող և Ապահովագրված անձի կողմից նախապես ընտրված մեկ բժշկական հաստատությունում ստացված ծառայությունները,
 - 11.1.3 Ապահովագրված անձին ցուցաբերված բժշկական ծառայությունների դիմաց Ապահովագրողն ապահովագրական հատուցման ենթակա գումարն անմիջականորեն վճարում է Բժշկական հաստատությանը,
- 11.2 Պայմանների 4.1.3 կետում նշված Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը, Ապահովագրված անձը կամ Շահառուն պարտավոր է.
- 11.2.1 ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՀԱՅՏՆԵԼ դրա մասին Պայմանագրում նշված հեռախոսահամարով տեղյակ պահել ապահովագրողին, իսկ պատահարը տեղի ունենալուց հետո ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 30 (ԵՐԵՍՈՒՆ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ընթացքում այդ մասին գրավոր՝ ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում ներկայացնելով, տեղեկացնել Ապահովագրողին, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

- 11.2.2 Դժբախտ պատահարի հետևանքով Ապահովագրված անձի մահվան դեպքում՝ Ապահովագրված անձի մահվանից հետո 30 (ԵՐԵՍՈՒՆ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ընթացքում այդ մասին տեղեկացնել Ապահովագրողին:
- 11.2.3 Սույն պայմանների 11.2.1 և 11.2.2 ենթակետերով նախատեսված պարտականությունները չկատարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցում, եթե չապացուցվի, որ նա ժամանակին իմացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա: Մահմանված ժամկետում Ապահովագրողին գրավոր չտեղեկացնելու դեպքում ապահովագրողն իրավունք ունի չվճարել ապահովագրական հատուցում, բացառությամբ այն դեպքի, երբ ապահովադիրը (ապահովագրված անձը, Շահառուն) ապացուցում է տեղեկացնելու անհնարիությունը: Նշված ժամկետը հաշվարկվում է այն օրվանից, երբ Ապահովադիրն, Ապահովագրված անձին կամ Շահառուին հայտնի է դարձել պատահարի հետևանքների վրա հասնելու մասին:
- 11.2.4 Ապահովագրական պատահարի մասին ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՀԱՅՏՆԵԼ համապատասխան իրավասու մարմնին և ստանալ պատահարը լինելու փաստը հավաստող և հանգամանքները նկարագրող փաստաթղթեր, բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովագրողն Ապահովադիրն (Ապահովագրված անձին, Շահառուին) գրավոր փաստաթղթով ազատել է սույն ենթակետում նշված պարտականությունները կատարելուց,
- 11.2.5 Հնարավորության սահմաններում իրականացնել գործողություններ՝ պատահարի մասնակից այլ կողմերի և վկաների (առկայության դեպքում) ինքնությունը (անուն, ազգանուն, հասցե, հեռախոսահամար և այլն) պարզելու նպատակով,
- 11.2.6 Ապահովագրական պատահարի հետ կապված գործընթացներում այլ կողմերի հետ հարաբերություններում ապահովել իր իրավունքների և շահերի պատշաճ պաշտպանությունը,
- 11.2.7 Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝
- Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից գրավոր դիմում՝ հատուցում ստանալու վերաբերյալ,
 - Պայմանագրի բնօրինակը (Ապահովագրողի պահանջով),
 - Ապահովագրված անձի և Շահառուի անձնագրերը,
 - Ապահովագրված անձի օրգանիզմում ալկոհոլի, թմրադեղերի և հոգեմետ այլ նյութերի առկայության մասին փաստաթուղթ՝ հաստատված իրավասու մարմնի կողմից (Ապահովագրողի պահանջով),
 - Արտադրությունում արտադրական վնասվածք (տրավմա) ստանալու Դժբախտ պատահարի վերաբերյալ ակտ, եթե Ապահովագրական պատահարը տեղի է ունեցել արտադրական վնասվածքի հետևանքով,
 - Դժբախտ պատահարում մեղավոր կողմի առկայության դեպքում՝ մեղավորի վերաբերյալ տվյալներ,
 - Իրավասու մարմնի կողմից Դժբախտ պատահարի արձանագրությունը և տվյալ պատահարին առնչվող այլ փաստաթղթերը (Ապահովագրողի պահանջով):
- 11.2.8 Դժբախտ պատահարի հետևանքով **Ապահովագրված անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճան ստանալու դեպքում** 11.2.7 կետում նշված փաստաթղթերից բացի ներկայացվում է նաև՝
- Գնահատող հանձնաժողովի կողմից տրված Ապահովագրված անձի ֆունկցիոնալության սահմանափակման և վերաբերյալ որոշումը,
- 11.2.9 **Դժբախտ պատահարի հետևանքով Ապահովագրված անձի մահվան դեպքում** 11.2.7 կետում նշված փաստաթղթերից բացի ներկայացվում են նաև՝
- Ապահովագրված անձի մահվան վկայականի բնօրինակը կամ նոտարական գրասենյակի կողմից հաստատված պատճենը,

- Ապահովագրված անձի մահվան պատճառների վերաբերյալ բժշկական տեղեկանքը/վկայականը (Ապահովագրողի պահանջով),
 - Նոտարի կողմից հաստատված ժառանգության իրավունքը հաստատող փաստաթուղթ, բացառությամբ եթե Պայմանագրում նշված Շահառուն է ներկայացնում հատուցում ստանալու համար փաստաթղթերը:
- 11.2.10 **Դժբախտ պատահարի արդյունքում առաջացած աշխատունակության ժամանակավոր կորստի կամ ֆունկցիոնալության սահմանափակման թեթև աստիճանի դեպքում** 11.2.7 կետում նշված փաստաթղթերից բացի ներկայացվում են նաև՝
- Ամբուլատոր սպասարկման դեպքում՝ բժշկական տեղեկանք և(կամ) խորհրդատվական թերթիկ և(կամ) քաղվածք ամբուլատոր քարտից
 - Ստացիոնար բժշկական օգնության դեպքում՝ ստացիոնար քարտից քաղվածքի (Էպիկրիզի) բնօրինակը
 - Փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր՝ վճարման հաշվի (հաշիվ-ապրանքագրի) բնօրինակը և հետեյալ փաստաթղթերից որեւէ մեկի բնօրինակը՝ դրամարկային ֆիսկալային կտրոն կամ դրամարկի մուտքի օրդեր (կանխիկ վճարման դեպքում) կամ բանկային փոխանցման անդորրագիր
- 11.2.11 Ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգվել, եթե Ապահովագրված անձի նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ կապված Ապահովագրական պատահարի առաջացման հետ:
- 11.2.12 Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) ՊԱՐՏԱՎՈՐ Է Ապահովագրողի պահանջով տրամադրել նաև այնպիսի փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք ուղղակի կապ ունեն տեղի ունեցած պատահարի հետ կամ կարևոր են վնասի պատճառների և (կամ) չափի հիմնավորման համար:
- 11.2.13 Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) ՊԱՐՏԱՎՈՐ Է ապահովագրական հատուցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը (բացառությամբ գրավոր դիմումի) ներկայացնել Ապահովագրական պատահարի վերաբերյալ Ապահովագրողին ԳՐԱՎՈՐ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՕՐԿԱՆԻՑ ՀԵՏՈ 6 (ՎԵՑ) ԱՄՄՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:
- 11.2.14 Սահմանված ժամկետում Ապահովադիրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից Պայմաններով անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր որևէ միջնորդություն 11.2.13 կետով սահմանված 6 (վեց) ամիս ժամկետը երկարաձգելու մասին չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Պայմանների համաձայն Ապահովադիրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով կարող է մերժել ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
- 11.2.15 Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) կրում է իր կողմից Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերի (ներառյալ՝ պատճենների) իսկության, հավաստիության և ոչ կեղծ լինելու բոլոր իրավական հետևանքների ռիսկերը:
- 11.2.16 Այն դեպքում, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև 3 (երեք) ամիս ժամկետով կամ մինչև Ապահովագրված անձի երկարատև բուժման ավարտը: Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադիրի կողմից ներկայացված փաստաթղթերը ստանալուց հետո ոչ ավել քան 2 (երկու) ամիս ժամկետով կասեցնել դիմումի ընթացքը և դիմել անկախ փորձագետի՝ Ապահովադիրի կողմից ներկայացված փաստաթղթերի (ներառյալ՝ բժշկական փաստաթղթերի, ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանի որոշումների) արժանահավատությունը, իսկությունը կամ վավերականությունը ստուգելու համար:
- 11.2.17 Ապահովագրողը, Ապահովադիրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ գրավոր դիմումը և անհրաժեշտ բոլոր

փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում կազմում է պատճառաբանված որոշում ապահովագրական հատուցում իրականացնելու կամ այն մերժելու վերաբերյալ, իսկ որոշում կազմելուց հետո դա առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում առձեռն, էլեկտրոնային տարբերակով կամ փոստային ծառայության միջոցով տրամադրում է Ապահովադրին, Ապահովագրված անձին, Շահառուին, իսկ 11.2.19 կետով սահմանված դեպքում՝ Շահառուի ժառանգներին:

- 11.2.18 Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցումը:
- 11.2.19 Եթե Ապահովագրության պայմանագրով նախատեսվում է ապահովագրական հատուցման վճարում մի քանի Շահառուների, ապա ապահովագրական հատուցումը նրանց վճարվում է Պայմանագրով նախատեսված մասնաբաժիններով: Եթե Պայմանագրով ապահովագրական հատուցման՝ Շահառուներից յուրաքանչյուրին վճարման ենթակա մասնաբաժինների չափը չի սահմանված, ապա ապահովագրական հատուցումը Շահառուներին վճարվում է հավասար մասնաբաժիններով:
- 11.2.20 Շահառուի մահվան դեպքում ապահովագրական հատուցում ստանալու իրավունքն անցնում է Շահառուի՝ օրենքով ճանաչված ժառանգներին:
- 11.2.21 Ապահովագրական հատուցման վճարումն իրականացվում է Ապահովագրողի կողմից Ապահովագրված անձին բանկային հաշվին փոխանցելու միջոցով:
- 11.2.22 Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) պատահարի հետ կապված յուրաքանչյուր նամակի, պահանջի, հայցի, դատաքննության, հետաքննության կամ ցանկացած գործընթացի վերաբերյալ տեղեկությունները կամ փաստաթղթերը պետք է ամիջապես ներկայացնի Ապահովագրողին:
- 11.2.23 Դժբախտ պատահարի և (կամ) դրա առաջացրած հետևանքների միջև պատճառահետևանքային կապը պարզելու, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելու նպատակով Ապահովագրողը կարող է իր հաշվին նշանակել Ապահովագրված անձի բժշկական քննություն և (կամ) գնում, իսկ Ապահովագրված անձը ՊԱՐՏԱՎՈՐ Է տվյալ քննությունն անցնել Ապահովագրողի կողմից ընտրված բժշկական հաստատությունում, որից Ապահովագրված անձի հրաժարվելու դեպքում Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՍԵՐԺԵԼՈՒ ապահովագրական հատուցումը:
- 11.2.24 Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը կամ հետ պահանջել այն, եթե քննության արդյունքում պարզվի, որ Պայմանագիրը կնքելու պահին և (կամ) Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադրի կողմից ապահովագրողին հայտնվել են ապահովագրական ռիսկին առնչվող կեղծ տեղեկություններ կամ այդ տեղեկությունները թաքցվել են, ինչպես նաև այն դեպքերում, երբ ապահովագրական հատուցումը նախատեսված չէր իրականացնելու:
- 11.2.25 Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը, եթե պայմանների 11.2.16 կետի համաձայն դիմել է անկախ փորձագետի և վերջինիս կարծիքով ապահովադրի կողմից ներկայացված բժշկական փաստաթղթերում զետեղված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, կեղծ կամ թերի է (ներառյալ՝ սխալ կամ ոչ ճիշտ ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանի սահմանումը):
- 11.3 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը պարտավոր է՝
 - 11.3.1 Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) պահանջով տրամադրել խորհրդատվություն հետագա իրականացվելիք գործողությունների վերաբերյալ,
 - 11.3.2 Ապահովադրից (Ապահովագրված անձից, Շահառուից) ապահովագրական հատուցման դիմում ստանալուց հետո վերջինիս տեղեկացնել բացակայող, բայց ապահովագրական հատուցման համար անհրաժեշտ փաստաթղթերի մասին,
 - 11.3.3 իրականացնել ապահովագրական հատուցում սահմանված կարգով և ժամկետում:

ԲԱԺԻՆ 12. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

- 12.1. Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է՝
 - 12.1.1. Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորություններն Ապահովագրողի կողմից կատարելու դեպքում,
 - 12.1.2. Եթե վերացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է Ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով,
 - 12.1.3. Պայմանագրից Ապահովադրի վաղաժամկետ հրաժարվելու դեպքում,
 - 12.1.4. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ սույն բաժնի 12.5 կետով սահմանված կարգով,
 - 12.1.5. ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:
- 12.2. Պայմանների 12.1.12.1.2 ենթակետով նախատեսված դեպքում Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է համապատասխան հիմքն ի հայտ գալու պահին և Ապահովագրողն Ապահովադրին վերադարձնում է Պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարները, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ընդ որում, Պայմանների 12.1.12.1.2 ենթակետով նախատեսված հիմքով Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Պայմանագրի գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է Ապահովադրի կողմից Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից սկսված, սակայն համապատասխան հիմքն ի հայտ գալու օրվանից ոչ շուտ:
- 12.3. Ապահովադիրը, Ապահովագրողի կողմից Պայմանագրի էական խախտման դեպքում, այն է՝ օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրն՝ այդ մասին ոչ պակաս քան 15 (տասնհինգ) օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:
- 12.4. Ապահովադրի նախաձեռնությամբ Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում Ապահովագրավճարն Ապահովադրին վերադարձման ենթակա չէ համաձայն ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի Հոդված 1014 3-րդ մասի դրույթների:
- 12.5. Ցանկացած ժամանակ Ապահովագրողն իրավունք ունի ծանուցել Ապահովադրին Պայմանագրի լուծման վերաբերյալ: Ծանուցումը ստանալու օրվանից 1 (մեկ) ամիս հետո Պայմանագիրը համարվում է դադարած՝ /առանց լրացուցիչ փաստաթուղթ կազմելու անհրաժեշտության/ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ լուծելու հիմքով: Տվյալ դեպքում Ապահովադրին վերադարձման ենթակա ապահովագրավճարը հաշվարկվում է 12.4 կետով սահմանված կարգով:
- 12.6. Պայմանագիրը կարող է Ապահովագրողի պահանջով վաղաժամկետ լուծվել՝ Ապահովադրի կամ Ապահովագրված անձի կողմից Պայմանագրի էական խախտման հետևանքով, այն է՝ օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, Ապահովագրողի օրինական պահանջը չկատարելու, Ապահովագրողին կեղծ կամ անարժանահավատ, ոչ հավաստի տեղեկատվություն ներկայացնելու դեպքում: Տվյալ հիմքով Պայմանագրի դադարման դեպքում Ապահովադրին ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն:
- 12.7. Եթե Ապահովագրված անձի գծով առկա է բացված հայց, կամ վճարված է կամ ենթակա է վճարման ապահովագրական հատուցում, ապա անկախ այդ գումարի չափից՝ Վկայագրով նախատեսված ապահովագրավճարը ետ չի վերադարձվում և այն ենթակա է ամբողջությամբ վճարման:
- 12.8. Պայմանագիրն առոչինչ կամ անվավեր է համարվում ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:
- 12.9. Սույն ապահովագրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Պայմանագրով, սույն Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 13. ՀՍՈՒՑՄԱՆ ՀԵՏ ՊԱՀԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍՈՒԲՐՈՂԱՑԻԱ)

- 13.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովագրված անձին պատճառված վնասից բխող նրա կամ Շահառուի պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:
- 13.2. Ապահովագրված անձը կամ Շահառուն պարտավոր է Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, ինչպես նաև տրամադրել իրեն հայտնի բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին սուբրոգացիա իրականացնելու համար:
- 13.3. Եթե Ապահովագրված անձը կամ Շահառուն հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված կամ հատուցվելիք վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ ՊԱՀԱՆՋԻ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ կամ այդ իրավունքի իրականացումը անհնարին է դարձել Ապահովագրողի, Ապահովագրված անձի կամ Շահառուի մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան չափով ազատվում է ԱՊԱՀՆՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ, իսկ ապահովագրական հատուցումն արդեն վճարված լինելու դեպքում՝ Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Շահառուից վերադարձնել ավելորդ վճարված ապահովագրական հատուցման գումարը:

ԲԱԺԻՆ 14. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (\$ՈՐՍ-ՄԱԺՈՐ)

- 14.1. Սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված պարտավորությունները մասնակի կամ լրիվ չկատարելու դեպքում Պայմանագրի կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այն հետևանք է անհաղթահարելի ուժի, մասնավորապես՝ ջրհեղեղի, պայթյունի, հրդեհի, երկրաշարժի, այլ տարերային աղետների, պատերազմի, ռազմական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ժողովրդական հուզումների, սահաբեկչության, գործադուլների, արտակարգ դրության, տնտեսական շրջափակման, հաղորդակցման միջոցների աշխատանքի դադարեցման, կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելանքների կամ նման այլ իրադարձությունների:
- 14.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը կամ դրա հետևանքները երկարաձգվում են 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Պայմանագրի մյուս Կողմին:
- 14.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա պարտավոր է ապացուցել այն Կողմը, որի պարտականությունների իրականացմանն է խոչնդոտում նման ազդեցությունը:

ԲԱԺԻՆ 15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

- 15.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի, Ապահովագրված անձի, Շահառուի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու միջոցով կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համաձայն:
- 15.2. Վեճերի առաջացման դեպքում Պայմաններով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: